Լևոն Միրիջանյանի անվան թիվ 155 հիմնական դպրոց

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Ուսուցիչ՝ Նելլի Գասպարյան

Ղեկավար՝ Թամարա Միրզոյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն …….3
Ներառական կրթությունը Հայաստանում ……..4
Ներառական կրթության անհրաժեշտությունը …….7
Ներառական կրթության մարտահրավերները ……. 9
Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ ……..12
Ի՞նչ է անում ներառական կրթությունը ……...12

ԳԼՈՒԽ 2

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունների

հիմնախնդիրը …….....13

2.1.Հետազոտության ուղղվածության հիմնավորումը……..…13

2.2. Հետազոտության ընտրակազմը և փուլերը…….16

Եզրակացություն……..17

Օգտագործված գրականության ցանկ……..20

Ներածություն

Ներառական կրթություն (ֆր.՝ Inclusif – ներփակված, լատ.՝ include - ներառված), կրթական համակարգ, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար: Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:

Ներառումը սկսվում է ընտանիքում,

շարունակվում դպրոցում և

կայանում է հասարակության մեջ:

Երեխաները, անկախ հաշմանդամ լինելուց կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամ երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Հաշմանդամ կամ սովորելու դժվարություններ ունեցող մարդիկ առանձնացման կամ պաշտպանության կարիք չունեն:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել կյանքին հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառական կրթությունը Հայաստանում

Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված է Հայաստանի Սահմանադրության 35-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք։ Հայաստանում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար։ Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի, որն ընդունվել է 1999 թվականին, «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»: Միաժամանակ նշված օրենքում ամրագրված է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով։ Նշված օրենքը հնարավորություն տվեց հասարակական կազմակերպություններին հանրակրթական դպրոցներում իրականացնելու ներառական կրթության ծրագրեր։ 2001 թվականից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներն իրականացնում են ներառական կրթություն։ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա 2000 թ. Երևանի Դերենիկ Դեմիրճյանի անվան 27-րդ միջնակարգ դպրոցում մեկնարկեց ներառական կրթության փորձնական ծրագիրը, իսկ 2001-2005 թթ. ընթացքում ներառական կրթություն իրականացվել է փորձնական կարգով 5 հանրակրթական դպրոցում։ 2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը։ Խորհրդային հասարակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հիմնականում կազմակերպվում էր գիշերօթիկ դպրոցներում։ Հայաստանի կողմից ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիային միանալուց հետո սկսվել է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը հանրապետությունում։ Հանրակրթական համակարգին զուգընթաց հանրապետությունում ընթացել են նաև հատուկ կրթության (գիշերօթիկ դպրոցների) համակարգի բարեփոխումներ։ Արժևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բնականոն

զարգացման և սոցիալական ինտեգրման խնդիրները՝ հատուկ ուսումնական հաստատությունների բարեփոխումները հիմնված են երկու հիմնարար սկզբունքների վրա կրթության մատչելիություն և որակ: Հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ իրենց անհատական կրթական կարիքին համապատասխան, ներառական որակյալ կրթությամբ ապահովելը դարձել է օրակարգային հարց: Այս ուղղությունների իրականացման նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, փոփոխություններ են առաջարկվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում, 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումով սահմանվեց «ներառական կրթություն» հասկացությունը: Համաձայն նշված օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ»: 2007 թվականից սկսած ընդլայնվում է պետականորեն ճանաչված ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանցը:Այսօր Հայաստանի Հանրապետությունում 117 հանրակրթական դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն, այնտեղ սովորում են շուրջ 2700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: 2002 թ. հանրապետությունում գործում էին 52 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում էր շուրջ 10.000 երեխա: Այսօր հանրապետությունում գործում են 23 հատուկ դպրոցներ, որտեղ սովորում է շուրջ 2300 սովորող: Ե՛վ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից, և՛ սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Դա հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային պարտադրաբար ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և նրան ներառելով հանրակրթական ուսումնական հաստատություն:

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման։

ՀՀ Ազգային ժողովը 2012 թ. հոկտեմբերին առաջին ընթերցմամբ ընդունել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ։ Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է «Կրթություն բոլորի համար» հռչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջներով, որոնց միանալով Հայաստանը պարտավորվել է ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար։ Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորություններով, այլև Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրով սահմանված ներառական կրթության ընդլայնման, հատուկ դպրոցների օպտիմալացման, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրման միտումով։ Արդյունքում կունենանք երեխայի անհատական տարբերություններից ու հաշմանդամությունից անկախ՝ կրթության իրավունքի միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորի բոլորի համար կրթության հավասարության իրավունքը:

Ներառական կրթության անհրաժեշտությունը

Ներառական կրթությունը՝ կրթություն է բոլորի համար:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը:

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը

կոտրելը բավական դժվար է։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները։ Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները։ Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Ներառական կրթության մարտահրավերները

Ներառական կրթության համակարգի զարգացում, բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն, հավասար հնարավորությունների ստեղծում և անհատական մոտեցումներ

- Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները։ Միևնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին։ Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք։
- Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն։ Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը։
- Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում։

- Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում:
- Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:
- Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և գիտակից աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար:

Ի՞նչ ասել է ներառական կրթություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց,

մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է բոլոր երեխաների ուսուցմանը,

բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,

ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,

ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Պետք է հիշել՝

– ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,

– բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար

– կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդամություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը:

Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:

Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Ի՞նչ է անում ներառական կրթությունը

Նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառում նշանակում է	Ներառում չի նշանակում
Ողջունել բազմազանությունը	Միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ՝ ողջ կրթական համակարգի բարեփոխում
Բարենպաստ պայմաններ ստեղծել բոլոր սովորողների, այլ ոչ թե շերտավորման սկզբունքով առանձնացված երեխաների խմբերի համար	Արձագանքել միայն առանձնահատկությանը, այլ բարելավել կրթության որակը բոլոր սովորողների համար
Դպրոց բերել այն երեխաներին, որոնք կարող են իրենց մեկուսացված զգալ	Հատուկ դպրոցներ, այլ թերևս՝ լրացուցիչ օժանդակություն աշակերտներին հանրակրթական դպրոցի շրջանակներում
Կրթությունը հավասարապես մատչելի դարձնել բոլոր երեխաների համար՝առանց վերջիններիս շերտավորելու	Բավարարել միայն հաշմանդամ երեխաների կարիքները Բավարարել մի երեխայի կարիքները մեկ այլ երեխայի հաշվին

ԳԼՈՒԽ 2

Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունների հիմնախնդիրը

2.1.Հետազոտության ուղղվածության հիմնավորումը

Երևանի թիվ 89 հիմնական դպրոցում 2021-22 ուս. տարվա տվյալների համաձայն, սովորում են մի քանի աշակերտ, որոնք ընդգրկված են ներառական կրթության համակարգում, սա փոքր թիվ է կազմում ի տարբերություն այլ հիմնական դպրոցների, որոնց թվում ավելի շատ են ներառված աշակերտները: Նրանք ունեն կրթական տարբեր կարիքներ: Ծնողները ևս ներառված են կրթական համակարգում : Աշխատանքը բավականին դժվար է և աշխատատար, քանի որ առաջին անգամ ենք աշխատում նման երեխաների հետ: Իմ նպատակն է բացահայտել դպրոցում այս ծրագրի իրականացման առանձնահատկությունները: Պարզվել է, որ 2021-22 ուս. տարում

- Ներառական կրթության բազմամասնագիտական թիմում ընդգրկված են 1 հոգեբան, 4 սոցիալական մանակվարժ, հատուկ մանկավարժ և 1լոգոպեդ:
- Ծրագրում ընդգրկված են ինտելեկտուալ ֆունկցիայի «թեթև», «միջին» խանգարումներ ունեցող երեխաներ:
- Ըստ կանոնակարգի՝ ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաներին ըստ կարիքի տրամադրվում է հատուկ մանկավարժ,լոգոպետ, հոգեբան և այլ մասնագետներ: Երեխաները յուրաքանչյուր մասնագետի հետ հանդիպում են օրվա մեջ ոչ ավել քան 30 րոպե:

Այդ դասերի ընթացքում հոգեբաններն իրենց աշխատանքում առավելապես կիրառում են հետևյալ մեթոդները

«Պարզ հեքիաթների վերլուծություն», որի ընթացքում լինում են քննարկումներ երեխաների միջև, ինչը դրական է ազդում փոխհամագործակցության մթնոլորտի ձևավորմանը:

• «Օգնության ձեռքեր» մեթոդը ստուգում է, թե ինչքանով են միավորված նույն խմբի աշակերտները միմյանց ճանաչում և սրտացավ միմյանց նկատմամբ: Այս մեթոդը երեխաներին սովորեցնում է լինել հարգալից և սրտացավ՝ սեփական ընկերների և դիմացինի նկատմամբ:

Ուսուցիչ-ծնող համագործակցությունը մեր դպրոցում գործում է ամուր հիմքերի վրա, որը միանշանակ դրական է ազդում կրթադաստիարակչական աշխատանքների վրա:

Հետազոտական աշխատանքիս ընթացքում իմ առջև խնդիր եմ ունեցել.

• պարզել ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները կրտսեր դպրոցում՝ Երևանի թիվ 89 հիմնական դպրոցի օրինակով,

• ուսումնասիրել ուսուցիչների կրթության և որակավորման մակարդակը, աշխատանքային փորձի, մասնավորապես՝ ուսուցիչների ընկալումը և առանձին վերաբերմունքը ներառական կրթության հանդեպ,

• հետազոտել բազմամասնագիտական թիմի անդամների մասնագիտական մանկավարժական հանդուրժողականության մակարդակը:

1. Մեր կողմից մշակվել է հարցաթերթիկ՝ կազմված 8 հարցից՝ ներառական կրթության առանձնահատկությունները բացահայտելու համար:

2. Անցկացրել ենք Օ. Ս. Կուզմինայի «Ես և ներառական կրթությունը» և «Ուսուցիչը և ներառական կրթությունը» մեթոդիկաները: Հարցաթերթի

առաջին մասը ներառում է հարցվողների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար նախատեսված ընդհանուր հարցերը: Երկրորդ մասն արտացոլում է ուսուցչի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ վերլուծական բնույթի, անձնածին և մասնագիտական դիրքորոշման խնդիրները:

2.2. Հետազոտության ընտրակազմը և փուլերը

Որպես հետազոտության ընտրակազմ ընտրվել են թիվ **89** հիմնական դպրոցի բազմամասնագիտական թիմի անդամները, նրանց մասնագիտական գործունեության առանձնահատկությունները:

Հետազոտությանը ընդգրկվել են **1** հոգեբան, **1** լոգոպեդ, **1** ներառական կրթության համակարգող մասնագետ և **1**ուսուցիչ, ում դասարանում ընդգրկված է ԿԱՊԿՈՒ աշակերտ: Առաջին փուլում մշակվեց հարցաթերթիկը, վերլուծեցինք արդյունքները, ապա Յու. Ա. Մակարովի մեթոդիկաների միջոցով բացահայտվել է ներառական կրթության ծրագիրն իրականացնող մասնագետների անձնային կողմնորոշումներն ու մասնագիտական պատրաստակամությունը: Այսպիսով պարզ է դառնում, որ ուսուցիչները կարևորում են ներառական կրթության առկայությունը**:**

Եզրակացություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղափար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչուր հասարակություն: ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում: Ահա դրանք.

— երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց

— մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է տարբեր հնարավորություններ ունեցող երեխաների ուսուցմանը,

— բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն

— ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել

— ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Հատուկ կրթություն

— Երեխաների կրթությունը առանձնացված միջավայրում

— Կրթությունը կառուցված է ուսուցչի անհատական աշխատանքի վրա:

Ինտեգրացված կրթություն

— Երեխան հանրակրթական դպրոցում է:

— Երեխայի կրթությունը չի ուղեկցվել դպրոցների կազմակերպման, ուսումնական պլանների ու դասավանդման մեթոդների:

— Համապատասխան փոփոխություններով հանրակրթական

Ներառական կրթություն

— Երեխայի կրթությունը իր համայնքի սովորական դպրոցում:

— Ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են իրենց կարիքներով և կարողություններով:

— Կառուցված է թիմային աշխատանքի վրա:

Պետք է հիշել՝

— ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել

— բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար

— կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հատուկ կարիքներ ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց ձեռնարկ, Երևան 2017 հեղինակային հրատարակություն,

2. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ 1993// ՀՀ-ում ուժի մեջ մտած հոկտեմբերի 22-ին, երևան 2010,

3. Կրթության հատուկ կարիքների գործունեության կառուցվածք, ՅՈՒՆԵՍԿՕ, 1994,

4. Ներառական կրթության կազմակերպման պետական կարգ,

5. Макаров, Ю. А. Личность педагога и метод диагностики толерантности в професианальной педагогической среде, 2001 N5,

6. www.edu.am,

7. www.disabilityinfo.am

8. ՅՈՒՆԵՍԿՕ, Բաց ֆայլ ներառական կրթության մասին ԱՄՆ, 2004թ